Ամբատայ, և հարկեալ յուղարկեցին առ Իւսուֆ Շահն։ Որ և կախեաց զԱմբատ զփայտէ։ Եւ աւիղ նորա՝ որ կամէր 'ի մարմնոյն, (տայ) բժշկութիւն. (և իշխեաց) ամն ԻԴ. և մնացին ՝ այք այնուհետև անիշխան ամն Ի։

Աշոտ չորրորդ՝ որդի Ամբատայ նահատակի՝ որ կոչեցաւ Երկաթ, իշխեաց ամս Ը. հրամանաւ Օսմանոսի կայսեր ՝ ռոմայ, որ թագ յուղարկեաց սմա։

Աբաս՝ որդի Ամբատայ նահատակի՝ եղբայր Աշոտոյ՝ եկաց իշխան ամս ԻԴ։ Սա շինեաց զԱստուածաբնակ տաճարն զկաթուղիկէն 'ի Կարս՝ հրաշալան յօրինուածովք։ Երար խաղաղութիւն աշխարհիս ՝ այոց. զի եբարձ զխռովարար զաւազակն, և հաստատեցան ուխտք սրբութեանց՝ Մարմնջաձոր և Կապուտաքար յԱրշակունիս, և հռչականուն ՝ ռոմոսին և Դպրեվանք 'ի Շիրակ։

Հայ Մատենագրութեան թուանշային գրադարան